ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-15/09

ք. Երևան «26» «հունվարի» 2015թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Խ.Աղաբեկյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Հ.Ղուլիջանյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Զիկատար» պետական արգելավայրի պահպանության ծառայություններ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 11 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **15 526 400 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2015 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին
ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011006260
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ
Ի.Ղուլաբեկյան

Կազմակերպություն
«Ձիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ

Տավուշի մարզ, գ.Կողբ
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Նոյեմբերյան» մ/6

ՀՀ 247680022784
ՀՎՀՀ 07401434
«Ձիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Հ.Ղուկասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված № 1
«26» « հունվարի » 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴԾ-15/09 պայմանագրի

Պետական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011006260
ՀՎՀՀ [illegible]

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար [illegible]

[illegible]

(ստորագրություն)
Կ.Տ.

Կազմակերպություն

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ

Տավուշի մարզ, գ.Կողբ
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Նոյեմբերյան» մ/ճ

ՀՀ 247680022784
ՀՎՀՀ 07401434

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Հ.Ղուլիջանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
«Զիկատար» բնապահպանական արգելավայրի պահպանության ծառայություններ»
ծրագրի իրականացման

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն	Պետական արգելավայրի տարածքներում և պահպանման գոտու տարածքներում՝ ա) պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում, բ) հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակություն	Պահպանության միջոցառումներ, աշխատակիցների կողմից բացատրական և քարոզչական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն	Պատշաճ պահպանություն, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում	31.12.2015թ.	**13767800**

2	Հակահրդեհային միջոցառումներ	Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց պետական արգելավայրի պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը: Հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով	Հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով (հողի վերին շերտի հեռացում)	Համագործակցված պահպանության ապահովում և հրդեհի կանխում	15.11.2015թ.	**200000**
3	Արգելավայրի տարածքում հերթական և վերստուգիչ ստուգումների անցկացման միջոցառումներ	Գարնանային (2-րդ, եռամսյակ) և աշնանային (4-րդ եռամսյակ) հերթական վերստուգիչ ստուգումների արդյունքների ամփոփում	Իրականացված ստուգումներ, ներկայացված ստուգման արձանագրություններ	Ապօրինի հատումների կանխարգելում բացահայտում և հաշվետվություններ	31.12.2015թ	**100000**
4	Գիտական ուսումնասիրություններ	Դենդրոբազմազանությանը սպառնացող վտանգները: Սերմնային և կոճղաշիվային վերականգնման առանձնահատկությունները հատված ծառուտներում	Հյուսիս-արևելյան Հայաստանի անտառներում սերմնային և կոճղաշիվային վերականգնման ուսումնասիրություններ և գիտական հիմնավորված առաջարկություններ	Առաջարկվող միջոցառումների արդյունքում անտառների վիճակի բարելավում, աճի և արտադրողականու-թյան բարձրացում	31.12.2015թ	**250000**
5	Կենսաբազմազանության պահպանության, հարստացման և գործնական ուսուցումների կազմակերպման նպատակներով հիմնված տնկարանային տնտեսությունում տնկանյութի աճեցում և խնամք	Անտառային, գեղազարդային և անտառային պտղատու ծառաթփատեսակների տնկիների աճեցում, համապատասխան մասնագետների և ուսանողների համար գործնական ուսուցումների կազմակերպում	Տնկարանի հողի նախացանքային մշակություն, սերմերի ցանքս, սերմնաբուսակների և տնկիների խնամքի միջոցառումներ	Տնկարանի միավոր տարածքում սահմանված քանակի սերմնաբուսակի առկայություն, խնամված և պահպանված տնկարան	15.11.201թ	**1208600**
ԸՆԴԱՄԵՆԸ						**15526400**

Հավելված № 2
«26» « հունվարի » 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-15/09 պայմանագրի

Պետական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011006260
ՀԿՀՀ [illegible]
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար՝ Ա.Ավանեսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Կազմակերպություն

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ

Տավուշի մարզ, գ.Կողբ
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Նոյեմբերյան» մ/ճ

ՀՀ 247680022784
ՀԿՀՀ 07401434
«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Հ.Ղուլիջանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը **«Զիկատար» պետական արգելավայրի պահպանության ծառայություններ**	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1155	ԱԾ 12	Նկարագրություն Բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացում								
Չափորոշիչներ			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		Զիկատար պետական արգելավայրի տարածքում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն /պաշտպանություն/, հա	150	150	150	150				

	Մարդու գործունեության հետևանքով արգելավայրի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, հա	150	150	150	150				
	Զիկատար պետական արգելավայրի տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում, ստուգումների քանակը		1	1	2				
	Զիկատար պետական արգելավայրի տարածքում էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության մշտական դիտարկումներ, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություն, հաշվետվությունների թիվը		1	1	2				
Որակական	Սշակված չէ								
Ժամկետայնության	Աշխատանքների կատարման ժամկետը				Ընթացիկ տարվա 1-4-րդ եռամսյակ				
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	2593.0	6009.0	9890.0	15526.4

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը
1155 Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը
Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման արդյունքում աղքատության նվազեցում, բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը
«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ